

ՄՈՓՔԸ-ԵՎ ՄՈՓՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
ԸՍՏ ՍՏՐԱՐՈՆԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ»

2. Ժ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հին Հայաստանի (հախարատաշխայան, Արտաշեսյան և Արշակունյաց հարստությունների) պատմության ընթացքում առանձնահատուկ դեր է խաղացել Մոփքը: Մոփքի պատմությանը իրենց աշխատություններում անդրադարձել են հունա-հռոմեական պատմիչներ Դիոդորոս Սիկիացին, Ապպիանոսը, Հովսեփ Փլավիոսը, Ստրաբոնը, Դիոն Կասիոսը, Պլուտարխոսը, Պլինիոս Ավագը, Կլավդիոս Պտղոմեոսը, Ամմիանոս Մարկելլինոսը և ուրիշներ: Սակայն վերահիշյալ պատմիչների շահում Մոփքի պատմա-աշխարհագրական ուսումնասիրության համար առանձնահատուկ տեղ են գրավում անտիկ պատմիչ-աշխարհագրագետներ Ստրաբոնի (մ. թ. ա. 63—մ. թ. 19 թթ.) «Աշխարհագրությունում», Պլինիոս Ավագի (23—79 թթ.) «Բնական պատմությունում» և Պտղոմեոսի (83 թ. հետո—161 թ. հետո), «Աշխարհագրությունում» ամփոփված վկայությունները:

Մոփքին, մասնավորապես նրա ֆազանական պատմությանը տարբեր առումներով անդրադարձել են Հ. Հյուբշմանը, Ն. Ադոնցը, Կ. Կոստերոզը, Հ. Աստուրյանը, Հ. Մանանդյանը և ուրիշներ¹: Այսուհանդերձ Մոփքի պատմության վերաբերյալ ցայսօր չի գրվել որևէ առանձին մենագրություն: Մենք նպատակ չունենի կրկին անդրադառնալ Մոփքի ֆազանական պատմությանը, այլ ցանկանում ենք բնություն էերսրելի Մոփքի տարածքի և սանմանների խնդիրը՝ համաձայն վերահիշյալ երեք պատմիչ-աշխարհագրագետների (հատկապես Ստրաբոնի) վկայությունների:

Նախապես, ըստ Ստրաբոնի, Ջարենը՝ Ալեկյան բազավոր Անտիոնոս 4 Մեծից (223—187 թթ. մ. թ. ա.) անկախանալուց հետո (189 թ. մ. թ. ա.) կառավարել է «...Մոփքի, Ալիսիենի, Որոմանդոսի և այլ գավառների վրա, իսկ մյուսը (այսինքն՝ Արտաշես Ա-ը)՝ Արտաշատի վրա»²: Այս վկայությունից ամենիքն չպետք է եզրակացնել, որ Մոփքի բազավորությունը զբաղեցրել է ավելի մեծ տարածք, քան Արտաշես Ա-ը, չնայած որ Մոփքի կողմին պատմիչը հիշատակում է ևս երկու երկրամասերի անուններ, իսկ վերջում ուղղակիորեն ավելացնում «այլ գավառներ» արտասույցությունը: Ստրաբոնյան Արտաշատի վերաբերյալ պետք է հասկանալ կամ եկատի ունենալ «Աշխարհագրության» Մեծ Հայքի տարածքի մեծագույն մասը: Ստրաբոնը ընդհանուր առմամբ Հայքում հիշատակում է մոտ երեսուն վարչա-տարածային միավոր (նահանգ կամ գավառ, առանց դրանք իրարից զահագանելու)³, որոնց կեսից ավելին գտնվում

¹ Տե՛ս Հ. Հյուբշման, *Հին Հայոց տեղոյ անունները*, Քարթմ. Հ. Բ. Պիլեզիկեանի, Վիեննա, 1907, էջ 142—151, Ն. Ադոնց, *Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում*, քաղաքական կացութունը ըստ նախարարական կազդերի, Քարթմ. Ա. Բ. Խոնդկարյանի և է. Հ. Խոնդկարյանի, Երևան, 1987, passim, Կ. Դիախերյուզ, *Հնդկմիական Հայաստան և հռոմեական սատրապութիւնները Դ--Ջ դարերուն*, իրաւապատմական ուսումնասիրութիւն, Քարթմ. Վ. Նորշուանի, Վիեննա, 1914, էջ 44--51, Հ. Յ. Աստուրեան, *Քաղաքական վերաբերութիւնները ընդ-մէջ Հայաստանի և Հռոմէայ, 190* Ն. Բ. մինչև 428 յ. Ք., Վենետիկ, 1912, passim, Հ. Մանանդյան, *Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմության, սկզբից մինչև Արշակունիների հաստատումը Հայաստանում* (66 թ. մ. թ.), Տ. Ա. Երևան, 1977, passim, նույնի, *Երկեր, Տ. Բ. մաս Ա, Երևան, 1978, passim*:

² Strabo, The geography of Strabo. London. 1960, XI, 14, 5.

³ Ստրաբոնյան Հայաստանի վերաբերյալ նախապես անհրաժեշտ է ընդգծել մեկ կարևոր հանգամանք: Ստրաբոնը Հայաստանի կապակցութամբ չի օգտագործում վարչա-տարածային բաժանմանը վերաբերող որևէ տերմին, ինչպես հետագայում վարվել է Պլինիոս Ավագը (ստրատեգիա կամ պրեֆեկտուրա): Եթե այլ երկրների տարածային նկարագրության ժամանակ Ստրաբոնը օգտագործում է սփրագիս (σφραγίς, որը բառացի թարգմանվում է կնիք),

է երկրի արևմտյան մասում, այսինքն՝ Մոփիի թագավորության կազմում կամ վերջինիս հա-
րակից տարածվեցրում:

Վերոհիշյալ վկայության շարունակության մեջ Ստրաբոնը հաղորդում է. «Երկուսն էլ
(այսինքն՝ Արտաշես Ա-ի և Զարեհի պետությունները—2. 2.) մեծացան՝ շրջակա ազգերից զը-
րավելով զուսուզան մասեր. մարերից՝ Կասպիանեն, Փավնիտիսը և Բաստրոպեդան, վրացիե-
րից՝ Պարտաղերեսի լեռնալանջերը, Խորզենեն և Դոգարենեն, որ գտնվում է Կուր գետի մյուս
կողմում, խալտյուրներից և մոսսինդյկներից՝ Կարենիտիսը և Դերեսենեն, որոնք սահմանակից
են Փոքր Հայքին կամ նրա մասերն են. կատառներից՝ Ալիլիսենեն և Անտիտավրոսի կողմերը
գտնվող երկիրը և ասորիներից՝ Տամոնիտիսը. այնպես որ բոլորը խոսում էին մեկ լեզվով»:⁴
Ստրաբոնի այս վկայությունը կրկին անգամ ցույց է տալիս, որ այս տարածքները հենց ի
վեր եղել են հայկական: Դրանցից Կասպիանենի տեղը փայ հայտնի է, Փավնիտիսի հարցը
առայսօր մնում է բաց: Բաստրոպեդան, ըստ ակադ. Ս. Երեմյանի, Պարսպատունիքն է. իսկ Խոր-
զենեն՝ Կղարջը, որը «Աշխարհացոյցում» հիշատակվում է Գուգարքի կազմում:⁵

Այժմ մեզ անհրաժեշտ է պարզաբանել վերոհիշյալ վկայության երկրորդ մասի տեղանուն-
ների՝ Կարենիտիսի (Կարին), Դերեսենի (Դերջան), Ալիլիսենի (Եկեղիփ) և Անտիտավրոսի
կողմերը գտնվող երկրի տարածքների պատկանելիության հարցը. թե արդյո՞ք ա՞վ է կառավա-
րել այդ հողերում. Արտաշես՝ սը, թե՞ Զարեհը: Ինչ վերաբերում է վերջապես Տամոնիտիսի
խնդրին, երկայ այդ հարցը մենք առայժմ զիտակցաբար չենք մենարկում, բայց կանդրադառնանք
հետո համապատասխան տեղում:

Պատմիչ-աշխարհագրագետը վկայում է. «Նաև թե Արմենոսի հետ եղողները քնակեցան
Ալիլիսենում, որ նախապես Մոփաց տակ էր. մյուսները Սիսպիրիտիսում՝ մինչև Կալաբենեն և
Ադիարենեն, Հայաստանի սահմաններից դուրս»:⁶ Այսպիսով, ըստ Ստրաբոնի, Մոփիի թագավա-
րության սահմանը հյուսիս-արևելքում հասել է մինչև Ալիլիսեն գավառը ներառյալ: Վերջի-
նիցս հյուսիս հաջորդաբար տեղակայված են Դերջան և Սիսպիրիտիս (Սպեր) երկրամասերը:
Վերջին երկու գավառները, ինչպես պարզորոշ երևում է, Ստրաբոնը համարում է Մեծ Հայքի
թագավորության անբաժանելի մասերը, դրանք դիտելով Մոփիի թագավորությունից դուրս:
Այնուամենայնիվ մեկ այլ տեղ նա քյուրիմացաբար նշում է, որ Դերջանը և Կարինը հայերը կամ
ավելի ստույգ Արտաշես Ա-ը գրավել են մոսսինդյկներից: Ինչ վերաբերում է Կալաբենենին և
Ադիարենենին, ապա վերոհիշյալ ստրածքները հայաբնակ համարելով ճանդերն, Ստրաբոնը զը-
րանք դիտում է Մեծ Հայքի թագավորության տարածքից դուրս: Կալաբենեն գտնվում է Ադիա-
րենից հարավ՝ նրա անմիջական ներհանությունը: Այտուղ էր, որ Ասորեստանի թագավոր
Աշշուր-նասիր-Ակադ Բ-ը (884—855 թթ. մ. թ. ա.) կառուցեց իր Կալխալ մայրաքաղաքը՝
Տիգրիս և Մեծ Զալ գետերի միացման տեղում:⁷

Նախքան Մոփիի թագավորության մյուս շրջանների սահմանների և տարածքների հարցը
քննարկելը, անհրաժեշտ է անդրազանալ Անտիտավրոսին, Տավրոսին, Պարտաղերեսին, ինչպես
հաև հարակից մյուս լեռներին, քանզի նրանց տեղադրությունն ունի հույժ կարևոր նշանակա-
րյուն հնագույն Մոփիի թագավորության ուսումնասիրության խնդրում: Համաձայն Ստրաբոնի՝
հույները Տավրոս են կոչել Պամփոնյալից և Կիլիկիալից սկիզբ առնող ու մինչև Հնդկաստան
ձգվող լեռները, որի մեջ է մտնում նաև Հայկական լեռնաշխարհը: Այնուհետև, ըստ նրա, Տավ-
րոսը անջատում կամ բաժանում է Հայաստանը Միջագետքից: Նա միաժամանակ Տավրոսի հա-
մակարգի մեջ է մտցնում հաև Մոսսինդյան, Սկյուդիսիսի, Պարտաղյան (Պարտաղերեսի) և մեզ
բայրօրովին անհայտ Հայկական լեռնաշղթաները: Այս կապակցությամբ պատմիչ-աշխարհագրա-

Կարթիկա (Ἐπαρχία) և այլն, ապա Մեծ Հայքի կապակցությամբ գրում է ԵՂՎ ՔԵՂԻ ԵՆՎ,
այսինքն՝ շրջակայքը, μ:ϩη) մասերը և կամ հին հունարեն նմանատիպ այլ արտահայտու-
թյունները: Այնպես որ նահանգ, գավառ, երկրամաս և այլ վարչա-տարածքային միավորների
կիրառումը մեր կողմից կրում է պայմանական բնույթ:

⁴ Strabo, XI, 14, 5.

⁵ Տե՛ս Աշխարհացոյց Մովսեսի Խորենացույ, յաւելվածովք նախնեաց, Վենետիկ, 1881,
էջ 34: Պատմահայրը Կղարջը հիշատակում է զԿալարջ ձևով: Գուգարքի գավառների շարքում
այն հիշատակված է ամենավերջինը՝ իններորդը: Տե՛ս նաև Ս. Երեմյան, Հայաստանը ըստ
«Աշխարհացոյցի» (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քար-
տեզագրական հիմքի վրա), Երևան, 1963, էջ 77:

⁶ Strabo, XI, 14, 12: Տե՛ս նաև Գ. Տիրացյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության»
և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի ն. մ. թ. III—II դարերի
պատմության մասին, ԲԱՄ, 1962, № 2, էջ 10—11:

⁷ Տե՛ս Դ. Չ. Садаев, История древней Ассирия, Москва, 1979, էջ 78, նաև՝ История
древнего мира, расцвет древних обществ, под ред. И. М. Дьякошова, т. II, Москва,
1969, էջ 29:

գետը վկայում է. «Այս բոլոր լեռները մասերն են Տավրոսի, որը ձևացնում է Հայաստանի հարավային կողմը, և բաժանելով՝ այնտեղից դեպի հյուսիս են ձգվում և ճասնում մինչև Կովկաս և մինչև Եփեսոսը՝ ձուլվելով, որ ձգված է Կողխից Քեմիսկիյուրա»⁸: Այսպիսով, հայկական լեռնաշխարհի երկայնիվ ձգվող բոլոր լեռնաշղթաները համաձայն երա կարելի է կոչել մեկ անվամբ՝ Տավրոս: Այստեղից էլ՝ երեք Տավրոսների մասին գաղափարը, այն է՝ Հայկական Հյուսիսային, Ներքին և Արևելյան (այսպես կոչվում է հարավայինը) Տավրոսներ: Հյուսիսային Տավրոս ասելով պետք է նկատի ունենալ Քարձը Հայքի լեռները, որը արևելքում միանում է Մեղեղովի լեռներին, իսկ վերջինս իր հերթին արևելքում միանում է Հայկական պարին: Վերջինս հանդիսանալով Ներքին Տավրոսի օրգանական շարունակությունը՝ այնուհանդերձ համարվում է առանձին լեռնաշղթա: Վերջապես Արևելյան Տավրոսը սկիզբ է առնում Մովս (Ներկայիս Գյուլեկ) լեռից մի փոքր հարավ և ավարտվում է Վանա լճի ճարավային շրջանում:

Մոփից, համաձայն Ստրաբոնի, սկիզբ են առնում Տավրոսին հակադիր ուղղված Անտիտավրոսի լեռները: Հեղինակի խոսքը այստեղ, իհարկե, վերաբերում է ներկայիս Հայկական Ներքին Տավրոսին: Անտիտավրոսը իր հերթին ունի հույժ կարևոր նշանակություն Մոփի թագավորության սահմանների ուղղագծման հարցում: Անտիտավրոսը ձգվում է հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք, սկիզբ առնելով 39°-ի զուգահեռականից մի փոքր հարավ, 36°-ի միջօրեականի մոտից, որտեղ գտնվում են Մամեղավ (Ջամանտի-սու) գետի ակունքները: Հյուսիս-արևելքում Անտիտավրոսը հասնում է մինչև 40°-ի զուգահեռականի և 38°-ի միջօրեականի հասման տեղը, որից արևելք գտնվում է Եփրատը:

Սակայն Անտիտավրոսի վերաբերյալ վկայություններ դրանով չեն վերջանում: «Քիչըստ Տավրոսի հետքը. — հաղորդում է Ստրաբոնը, — որ սկիզբ է առնում Կոմմագենի և Մելիտենեյի մյուս կողմից, որ Եփրատն է ձևացնում, կա Մասիոս լեռը, որ հարավից գտնվում է Միզդոնիայի վերևը, Միջագետքում, ուր է Մծբինը: Հյուսիսային կողմից գտնվում է Մոփքը՝ Մասիոսի և Անտիտավրոսի միջև: Այս լեռնաշղթան էլ (նկատի ունի Անտիտավրոսը՝ բյուրիմացաբար շփաթելով Տավրոսի հետ — ձ. ձ.) սկիզբ առնելով Եփրատից և Տավրոսից (իբականում Անտիտավրոսից, որտեղից սկիզբ է առնում Ներքին Տավրոսը — ձ. ձ.) վերջանում է Հայաստանի արևելքում, մեջտեղում ունենալով Մոփքը (ընդգծումները մերն են — ձ. ձ.), և մյուս կողմից Սեղիզիք, որ գտնվում է Տավրոսի և Եփրատ գետի միջև, Նախման սրա թե՛վերը դեպի հարավ: Մոփքաց արվայանիստ Բազան է Կարկարիոկերոս»⁹: Այսպիսով, հյուսիս-արևմուտքում Մոփի թագավորության սահմանը ձգվել է մինչև Աղիւն (Առեւն) գավառը, Բանգի վերահիշյալ գավառի տարածքում է, որ իրար են միանում կամ հատվում Հայկական Ներքին Տավրոսը և Անտիտավրոսը: Այնուհետև այդտեղից, ինչպես պարզորոշ երևում է Ստրաբոնի վկայությունից, Անտիտավրոսով հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք ուղղվածությամբ ձրգվել է Մոփի թագավորության արևմտյան սահմանը: Սակայն ուղղակիորեն անհնարին է մատնանշել, թե մինչև ուր է հասել այն, որովհետև այդ կապակցությամբ ոչ մի կոնկրետ վկայություն կամ գտնե ակնարկ Ստրաբոնի մոտ գոյություն չունի: Վերջապես այս վկայությունը ցայց է տալիս, որ հարավում Մոփի թագավորությունը հասել է մինչև Մասիոսի լեռները, այսինքն՝ ընդգրկել է Հայոց Միջագետքի արևմտյան հատվածը, որը հարավում եզրափակվել է Մասիոսի լեռներով:

Այժմ մեզ անհրաժեշտ է անդրադառնալ ստրաբոնյան Տամոնիտիսին: Այս տեղանունը նախորդ ուսումնասիրողները սրբագրել են Երկու ձևերով՝ Տարոնիտիս կամ Տարոն և Տամոնիտիս կամ Տմոնիտի¹⁰: Ի տարբերություն նախորդ ուսումնասիրողների (Կիպերտի, Տումաշեկի, Մարկվարտի, Ձ. Մանեղյանի)՝ լիովին այլ տեսակետի է Ս. Երեմյանը: Վերջինս գտնում է, որ Տամոնիտիսը ծագել է Քման բնակավայրի անունից, որտեղ բնակություն է հաստատել Նալը ճամաշխարհային ջրհեղեղից հետո, իսկ այնուհետև այդ անվանումը տարածվել է Կորդոսի վրա¹¹: Վերջին ենթադրությունը անընդունելի է ի սկզբանե, որի վերաբերյալ հեղինակը գրում է. «Ստրաբոնը վերջինիս (այսինքն՝ Քմանի — ձ. ձ.) անունով Կորդոսը կոչում է նաև Ταμονίτις, որ ասորա-բաբելական արձանագրությունների Դառոյ երկիրն է»¹²: Ստրաբոնին այդպիսի անունով բնակավայր հին Հայաստանում հայտնի չէ: Նույնպիսի հաջողությամբ կարելի է պնդել նաև Կարապետ, որ Քմանը առաջացել է Կորդոսից: Տարոն—Տմոնիտի հարցում մեզ

⁸ Strabo, XI, 2, 15:

⁹ Նույն տեղում, XI, 14, 2:

¹⁰ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Հայաստանը նախնադարյան-համայնական և ստրկատիրական կարգերի ժամանակաշրջանում, խմբ. Ս. Երեմյանի, Երևան, 1971, էջ 547:

¹¹ Տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», էջ 53, 60 և այլն:

¹² Նույն տեղում, էջ 60:

ինովին համոզեցուցիչ են թվում Հ. Մարկվարտի, Հ. Մանանդյանի և Գ. Սարգսյանի կարծիքները, համաձայն որոնց Տառնեիսիսը Տմորինն է:

Տմորիի հարցում մեզ համար ամենակարևորը նրա իրավասության հարցի պարզաբանումն է: Համաձայն «Ալիարհուցոյցի» Տմորիի մեջ են մտել Վերին, Միջին և Ներքին Կորդոնի երկամասերը, որոնք եղել են թվով վեցերորդ հանձնով՝ Կորնայի կազմի մեջ, տեղակայված լինելով Արևելյան Խարուր զեռի ավազանում: Կորդոնի վերաբերյալ Ստրաբոնը վկայում է. «Տիգրիսի մոտ են Գորդիսցոց երկրները, որոնք հեկտոր Կորդոն կրն կոչում ենք, որանց հազարհազար սեփական պարսպով պատած, այնպես որ երեք հազարի երեսույթ է ստանում: Սակայն այնուամենայնիվ, հակառակ իր ամրության, հալոց թագավորը նվաճեց այն, և հոռմեացիներն էլ բռնաբար գրավեցին...»¹³: Այս վկայությունը մեզ բերում է այն եզրակացություն, որ Տիգրանի օրոք ևս Կորդոնը շարունակել է գոյություն ունենալ որպես անկախ թագավորություն: Ստրաբոնին այս հարցում կայն լրացնում է Պլուտարխը, որ բավական մանրամասն պարզաբանում է Կորդոնի կացության հարցը: Վերջինս զորամաս կոմիտրոսի նշանագրությունում, անդրադառնալով հայ-հոռմեական պատերազմին, Կորդոնի վերաբերյալ վկայում է. «Այդ միջոցին (մ. թ. ա. 71 թ. հայ-հոռմեական պատերազմի ճակատային — Հ. Հ.) Ապպիոսը (խոսքը վերաբերում է հոռմեացի ղեկավար Յուսպիոս Ապպիոս կազմի ռոմե, որին Լուկոլլոսը ուղարկել էր Հաստատե Տիգրան Թ-ի հետ բանակելու համար — Հ. Հ.) իր կողմը գրավեց իշխանավորներից շատերին, որոնք ներկայումս մեծ ղեկավարությամբ կրն հնազանդել Տիգրանին: Մտնեցից մեկ էր Ջարթիկոսը՝ Կորդոնը թագավոր»¹⁴: Այս տեղեկությունից կարելի է եզրակացնել, որ Կորդոնը հիշյալ ժամանակաշրջանում հանդիսացել է status in statu: Երկու միտումը կարմիր թելի պես անցնում է հոռմեական այդ պատմագրության միջով: Երկուսից Պլուտարխից էրեք վար անց՝ մ. թ. IV դարի ազգությամբ հույն, լատինացի պատմիչ Ամմիանոս Մարկելլինոսը իր «Գործնամ», Կորդոնը դիտում է որպես առաջադրություն, որտեղ, համաձայն նրա վկայության, կառավարել է ոմն Հովիանոս¹⁵:

Կորդոնի այսօրինակ կարգավիճակի մեղաբերումը մեզ համար խիստ կարևոր է այն առումով, որ հոռմեացիները հույնալիսի մտնեցում են յուզաբերել նաև Մոփիին: Ըստ Պլուտարխոսի՝ Լուկոլլոսը Պոնտոսի թագավոր Միհրդատ Զ Նվալատին (111—63 թթ.) հաղթելուց հետո, երբ պատերազմ է կատարել Տիգրան Թ-ի դեմ, հարյուրեցի է եփրապար և մտել Մոփի տարածք, իսկ հետո միայն անցնելով Տիգրիսը՝ ներխուժել է Արտաշեսյան շահաստան: Փաստորեն ստացվում է, որ նա Մոփը դիտում է Մեծ Հայքի թագավորությունից դուրս, որպես առանձին, անկախ պետություն: Հակառակ Պլուտարխոսի, Ստրաբոնը վկայում է. «...Ջարենի շահավիղն էր Արտաշես Մոփացին, որ ուներ հազարային և մանավանդ հարավ-արևմտյան մասը: Ոչնչացվելով Տիգրանի ձեռքով, այս վերջինը ամբողջ երկրին տեր դարձավ»¹⁶:

Հանրահայտ փաստ է, որ մ. թ. ա. 94 թ. Մոփը որպես անկախ թագավորություն դադարել էր գոյություն ունենալ, որով և վերջնականապես ավարտվել էր Մեծ Հայքի թագավորության տարածքի ամբողջականացումը: Սակայն հոռմեական ղեկավարությունը դեռևս առաջնորդվում էր պլուտարխոսյան դրույթներով՝ Մոփը համարելով անկախ պետություն: Մոփի նկատմամբ ունեցած այդ վերաբերմունքը արտացոլվել է նաև մ. թ. ա. 66 թ. Արտաշատի պալմանագրում, որի վերաբերյալ ավելի հանգամանորեն կխոսենք ստորև: Վերջապես, Նիբալտի սահմանագիծը պատկերացրել էր սույն, որ վոփոսիվել էր ոչ միայն Մոփի կարգավիճակը, այլև սուրաճի: Դա հշանակում է, որ մեկ գրած ունենեմ մեկ այլ Մոփի հետ ևս, որին անդրադարձել է նաև Ստրաբոնը: *

Վերադառնալով Ջարթիկոսին՝ նշենք, որ նա շատ լավ վճարեց ղափանեություն համար, քանզի Տիգրանի կողմից ստանկվեցին ինչպես ինքը, այնպես էլ նրա կինն ու երեխաները: Այնուհետև Կորդոնը ներխուժած Լուկոլլոսը կատարեց Ջարթիկոսի թալման արժանավայել ծեսը և կանգնեցնել ավելց նրա մահաբանը¹⁷:

Տիգրանակերտի նակտամարտից հետո (69 թ. հուլիանի 6-ի) Լուկոլլոսը, համաձայն Պլուտարխոսի, զորով ձմեռել է Կորդոնում, իսկ 68 թ. գարնանը Կորդոնից շարժվել է դեպի Արտաշատ՝ անցնելով Տավրոսը և դուրս գալով Մշո դաշտ: Սակայն Մշո դաշտում նա ընկել է նուսահատության մեջ, քանզի այստեղ դաշտերը դեռ կանաչ էին, մինչդեռ Կորդոնում, նախ-

¹³ Strabo, XVI, 1, 24:

¹⁴ Plutarchs, Lives, Lucul, XXIV, London, 1959:

¹⁵ Ammianus Marcellinus, Rerum gestarum., v, I, London, 1956, XVIII, 6; 20:

¹⁶ Strabo, XI, 14, 15:

¹⁷ Plutarchs, Lives, ducul, XXIX:

հան Լուկուլլոսի մեկնելը, սկսվել է հունձը¹⁸: Այս վկայությունը մեզ օգնում է կանխագուշակելու Մոփհի և Կորդոփի միջև գոյություն ունեցած սահմանը: «Աշխարհացոյցյան» Կորդոփի հյուսիս-արևմտյան սահմանագիծը հանդիսացել է Ջերմ (կամ որ միևնույնն է՝ Արևելյան Տիգրիս) գետը: Այն խիստ լեռնային մի երկիր էր, ուր, բնականաբար, գարնան վերջերին բերք չէր կարող հասունանալ: Հետևաբար Կորդոփը տարածվել է նաև Ջերմից արևմուտք՝ նրա աջ ափին, ընդգրկելով Ալձն (Արզան) գավառը, որը հարթավայրային շրջան է, իսկ քնակլիմայական պայմանները հետազոտություն են ընձեռում քեֆի վաղ հասունացման:

Այսպիսով, ինչպես տեսնվում է վերջի շարադրվածից, հարավ-արևելքում Մոփհի թագավորությունը սահմանակից էր Կորդոփին՝ հասնելով մինչև Ալձն գավառը: Քանի որ Ստրաբոնը հարավ-արևմուտքում Մոփհի թագավորությունը հասցնում է մինչև Մասիոսի լեռները, ապա հավանաբար հարավ-արևելքում Մոփհը հասել է մինչև Քաղիթը (Շիրիթմա) գետը ընկած տարածքը: Այստեղից հարավ Մոփհի թագավորության մեջ է մտել Հայոց Միջագետքը, որը հարավում եզրափակվում է Մասիոսի լեռներով, իսկ նրանից արևմուտք գտնվում է Գիմաթենն գավառը, որը հայունի է իր շերմուկներով (Աբառենի կամ Վաղարշակապոսի):

Ավելի դժվար է պարզաբանել, թե ինչպիսի տեսք է ունեցել Մոփհի թագավորության սահմանը Մասիոսից դեպի արևմուտք, քանզի Ստրաբոնն այն ներկայացնում է խիստ ընդհանուր կամ, ավելի ստույգ՝ համարյա թե բացակայում է: Եւ, ինչպես նշեցինք վերևում, հայտնում է, որ Մոփհը տեղակայված է եղել Մասիոսի և Անտիոսի միջև: Այս նկայածավայ տարածքում հարավից-հյուսիս գտնվում են Հայոց Միջագետքի արևմտյան կեսը, արևելյան Կոմմագենները, արևելյան Կապադովկիան և, վերջապես, Փոքր Հայքի հարավը:

Մոփհի՝ հին Հայաստանի պատմության մեջ ունեցած կարևոր դերի մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ երկրի բոլոր վարչական շրջաններից միմիայն նրա վերաբերյալ է, որ նշատակել են անտիկ երեք նշանավոր պատմիչ-աշխարհագրագետները (Ստրաբոնը, Պլինիոս Ավագը և Պտղոմեոսը): Բացի այդ, դա պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ հռոմեացիները առաջինը անմիջականորեն շփվել են Մոփհի հետ, որովհետև վերջինս գտնվել է Հայաստանի ծայր արևմուտքում՝ հայ-հռոմեական սահմանագլխին: Ստրաբոնը վկայում է. «Տավրոսից դեպի հյուսիս ձգվում են բազմաթիվ ճյուղեր, որոնցից մեկն է Անտիտավրոս կոչվածը: Այսպես է կոչված նրա համար՝ որ իր և բուն Տավրոսի միջև գտնված հովտում աճատում է Մոփհը»¹⁹: Ինչպես նշեցինք վերևում, այստեղ խոսք վերաբերում է Հայկական Հարավային Տավրոսին, երբ Մոփհը անկախ թագավորություն էր: Սակայն, թագավորությունից գալա, Ստրաբոնը հպանցիկ է աննկատ անդադարձել է նաև մեկ այլ Մոփհի նկարագրությանը, այն է՝ նահանգի: Բայց անվանական իմաստով նա ոչ մի տարբերություն չի տեսնում և երկու դեպքում էլ օգտագործում է Յօփոյն տեղանունը: Պատմիչ-աշխարհագրագետը վկայում է. «Այս երկուսից (այսինքն՝ Եփրատից և Տիգրիսից — 2. 2.) մեծագույնն է Եփրատը, որ անցնում է երկրի (Հայաստանի — 2. 2.) մեծ մասով՝ դուրապուտյոս հոսանքով, սկիզբ առնելով Տավրոսի հյուսիսային մասում, հոսելով դեպի արևմուտք՝ Մեծ կոչված Հայաստանի միջով՝ մինչև Փոքր Հայք, աջում ունենալով այս երկիրը, իսկ ձախում՝ Եփրատը: Այստեղից դառնում է դեպի հարավ, և այս պտույտի ժամանակ հասնում է Կապադովկիայի սահմանները, աջում թողնելով Կապադովկիայի և Կոմմագենի սահմանները, ձախում Մեծ Հայաստանի Եփրատը, Մոփհը, առաջանում է Ասորիք... (ընդգծումը մերն է — 2. 2.)»²⁰: Վերոհիշյալ վկայությունը ցցուն ցույց է տալիս, որ Մոփհի նահանգ դառնալուց հետո բավական կրճատվել է նրա տարածքը: Մոփհի նոր կարգավիճակով արևմուտքում Եփրատը սահմանագիծ է հանդիսացել նրա (կամ որ միևնույնն է Մեծ Հայքի թագավորության) և հարևան երկու պետությունների՝ Կապադովկիայի ու Կոմմագենի միջև: Բացի այդ, Ստրաբոնը Մոփհից տարանջատում է Եփրատը, այն դիտելով որպես առանձին վարչական տարածք:

Մոփհի վերաբերյալ Ստրաբոնի վերջին վկայությունը լրացվում է Կլավդիոս Պտղոմեոսի, «Աշխարհագրությունում» պահպանված այդ տեղանքի նկարագրով: Եւ կանգ է առել այդ շրջանի ոչ միայն լեռնագրության վրա²¹, այլև տվել է վարչական նկարագիրը, ճիշտ է խիստ մակերեսային, գրելով. «Վերցրած հատվածում՝ մինչև Եփրատի թեփվելը ամենաճյուսիսային գա-

¹⁸ *Տե՛ս նույն տեղում*, Lucul, XXXI, նահ՝ 2. Մանանդյան, *Տիգրան Բ և Հոռոմը*, Երբ լուսարանությունը ըստ սկզբնաղբյուրների, Կ. Ա., էջ 537—538:

¹⁹ Strabo, XI, 12, 4:

²⁰ *Նույն տեղում*, XI, 12, 3:

²¹ Claudii Ptolemaei, Geography, V, 13, § 5: Պտղոմեոսի աշխարհագրական հայացքների վերաբերյալ մանրամասն տե՛ս В. А. Бронштэн, Кладдѣй Птоломей, М., 1988, էջ 136—159:

վառներն են, սկսած արևմուտքից՝ Բասիլիսեն, Օբորդեն, Արսիա, դրանից ներքև՝ Ակիլիսեն, Ատաունիտիս և հինգ կորուրյան մտ Սոփենե»²²:

Մոփիի թագավորության անկումից հետո այն հայկական և հունա-հռոմեական մատենագրության մեջ հանդես է եկել Սոփենե (Σοφηνή, Sophene) և Սոփանենե (Σοφαναηνή, Sophanene) անվանումներով: Յուրաքանչյուր, ինչպես նշեցինք վերևում, այդ մասին ոչինչ չգիտենք: Սակայն Մոփիի պատմության ամբողջականացման համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է հակիրճ անդրադառնալ այս հարցին ևս:

Օտարալեզու պատմագրության մեջ երկու Մոփեերի՝ Սոփենեյի և Սոփանենեի վերաբերյալ առաջին անգամ խոսում է բյուզանդացի պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին²³: Հայ մատենագիրներից առաջինը Մոփեեր գտնագտնում է Փավստոս Բուզանդը²⁴: Վերլուծելով բոլոր առկա աղբյուրների տվյալները՝ Ն. Հյուրջմանը գում է. «Sophanene-ի եւ Sophene-ի մէջ եղած իրական տարբերութիւնը յոյն մատենագիրք առաջին անգամ լրերացս Դ դարու պայծառ ըմբռնեցին՝ 297 ի խաղաղութեամբն այս երկու գաւառներուն Հռոմոց պետութեան անցնելէն ետքը»²⁵: Նույն կարծիքին է նաև Ն. Աղոնցը²⁶: Վերջին շրջանում այս խնդիրը հանգամանակից վերլուծության է ենթարկել Բ. Հարությունյանը՝ իրավագիտուն մատենաշելով. «Սակայն Մոփեերի հաշտությունը կենդիւն հունացիները, քսա մեզ, դեռևս լուրջ գաւազանություն չէին դնում Մեծ և Շահունի Մոփեերի միջև»²⁷: Մեզ մնում է ավելացնել, որ Խոսելով Մոփեերի՝ Բուզանդի և Պրոկոպիոսի տարբերակումների կամ զանազանումների վերաբերյալ շարժել է կարծել, որ միասնական Մոփիի երկատուր թագավորության վերացումից հետո (մ. թ. ա. 94 թ.) կառուարվել է V—VI դարերի միջև ընկած ժամանակաշրջանում, երբ ստեղծագործել են վերահիշյալ երկու պատմիչները:

Մեծ և Շահունի Մոփեերի վերաբերյալ պատմական այս համառոտ ակնառիկ հետաքննումը կանդրադառնանք ստորաբնյառ Մոփի նահանգի բնույթյան հարցին: Իր «Աշխարհագրության» մեջ Ստրաբոնը վկայում է. «Եփրատը սկիզբ առնելով Տավրոսի հյուսիսային կողմից, նախ հոսում է արևմուտք՝ Հայաստանի միջով, հետո դառնում է հարավ և կտրելով Տավրոսը՝ Հայաստանի (Հայաստանի և ոչ թե Մոփիի թագավորության — Ն. Հ.) և Կապադոկիայի ու Կամագենի միջև, դուրս է գալիս Շահնցից և անցնելով Սիրիայով՝ դառնում է դեպի ձմեռային արևելք՝ մինչև Բաբելոն և կազմավորում է Միջագետքը՝ Տիգրիսի մաս»²⁸: Արդիև հիշա է, որ Եփրատը սկիզբ է առնում Հայկական ներքին Տավրոսից հյուսիս, ունենալով երկու ակունք՝ Արևմտյան Եփրատ (այժմ Կարա-սու) և Արևելյան Եփրատ (Արածանի) կամ ներկայումս Մուրադ գետերը: Այս երկուսը իրար են միանում Լուսարսիքի մոտ, այսինքն՝ այնտեղ, որտեղից մոտավորապես սկսվում է Եփրատի կիսաշրջանան հոսքը: Այն շարունակվում է մինչև Քմենի կամ Տոմիս ընկած տարածքը: Այնուհետև Եփրատը նկղծելով անցնում է Կիրիկյան Տավրոսի շարունակությունը հանդիսացող Հայկական Արևելյան Տավրոսով, որտեղ Մեծ Հայքը հյուսիս-արևմուտքից սահմանակից է Կապադոկիային, իսկ հարավ-արևմուտքից՝ Կամագենին: Դա համապատասխանում է Մեծ Հայքի Անձիտ գավառի տարածքին, որը, համաձայն «Աշխարհացոյցի», մտել է Զորոտղ Հայք կամ Մոփի նահանգի կազմի մեջ, հանդիսանալով բովի հիւնդեբուրդ գավառը: Փաստորեն այս անգամ ևս Ստրաբոնը անդրադարձել է Մոփիի նկարագրին, բայց ոչ որպես անկախ թագավորության, ինչպես վերևում, այլ որպես Մեծ Հայքի թագավորության անբաժանելի տարածքի, ուստի և իրավացիորեն հրաժարվում է Մոփի տեղանունը օգտագործելուց: Վերջապես, համաձայն նույն Ստրաբոնի, Մոփիի թագավորությունը տարածվել է ոչ միայն Եփրատի արևելյան (ձախ) ափին, այլև արևմտյան (աջ) ափին, մինչդեռ վերահիշյալ վկայությունն է մեր Եփրատը տրոհել սահմանագիծ է Մեծ Հայքի թագավորության և երկու հարևան պետությունների՝ Կապադոկիայի ու Կամագենի միջև:

²² Claudii Ptolemaei, V, 13, §13:

²³ Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայրի մասին», Կ. Ց, Երևան, 1967, էջ 59, 191—193, 299, 304:

²⁴ Տե՛ս Փավստոսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց, ի լոյս ած Բ. Գ., Ս. Գետերբուրգ, 1883, Գ, Թ և այլն:

²⁵ Ն. Հյուրջման, Եղվ. աշխ., էջ 145:

²⁶ Տե՛ս Ն. Աղոնց, Եղվ. աշխ., էջ 41—45:

²⁷ Բ. Հ. Հարությունյան, Մեծ Հայքի թագավորության հարավ-արևմտյան երկրամասերի վարչաքաղաքական կազմավորումը III դարի վերջին և IV դարի սկզբին, ԲՅԸ, 1982, № 2, էջ 89: Տե՛ս նաև Եուլի՛՝ Система политико-административного деления Великой Армении по «Ашхар (h) ашуйцу», (армянской географии), (западные и южные области), автореферат диссертации на соискание ученой степени доктора ист. наук, Ереван, 1993, էջ 15—18:

²⁸ Strabo, XI, 14, 2:

Այժմ անդրադառնանք Եփրատի կիսաշրջանածև հատվածին: Այստեղ է նախկինում տեղա-
կայված եղև սուրբաբնյան Մովսիսի քաղալորության միջնամասը կամ միջին Մովսիսը: Այս կի-
սաշրջանի մոտ և նրանից հյուսիս ընկած տարածներում էլ հետագայում տեղակայված է Ե-
զել «Աշխարհացոյցի» Մովսիս համանրը կամ Չորրորդ Հայքը: Ն. Աղոնցը այստեղ, այսինքն՝
Եփրատի կորույթյան մոտ և տեղադրում այսպես կոչված Գեղեցիկ դաշտը կամ Ալեյուան, որի
վերաբերյալ վկայում է Պոլիբիոսը:²⁹ Վերջինս հաղորդում է. «Քսերեսերս (խոսքը Մովսիսի
քաղալորի մասին է — Շ. Շ.): քաղալորության ժամանակ Արշամաշատ (բնագրում՝ ԱՐՄՈՒՍ՝ Ա-
ՇԱ փոխարենը՝ ԱՐՍՄԱՍ՝ ՍԱՏԱ) փաղարը, որը գտնվում է այսպես կոչված Գեղեցիկ դաշտում,
Եփրատի և Տիգրիսի միջև՝ Անախոֆոս քաղալորը (Անտիոֆոս Գ Մեծը — Շ. Շ.) ցանկացել է
զաշարել ու գրավել այդ փաղարը և բանակել է նրա մոտ»³⁰: Ն. Աղոնցը գտնում է, որ դա
ներկայիս Խարբերդի դաշտավայրն է, հիմք ընդունելով հոմանացի պատմիչ Կոննիլիոս Տակի-
տոսի (մոտ. 55—մոտ. 120 թթ. մ. թ.) մի վկայությունը, գրում է. «Այդ փաղարից անվա-
նը միանգամայն արժանի է Խարբերդի դաշտավայրը, որը մեր օրերում էլ այժի է ընկնում իր
բերրիությամբ և բնակչության խտությամբ»³¹: Շ. Կարազոյզյանը այն նույնացնում է Արգիշտի
և թագալորի (մ. թ. ա. 786—764 թթ.) Խորխուրույան արձանագրությունում հիշատակվող
Կալայի երկրի հետ»³²:

Մեր կարծիքով հազիվ թե Հայկական Արևելյան Տավրոսի հյուսիսային փեշերին գտնվե-
ր մի այնպիսի ընդարձակ, բերրի ու հոծ բնակեցված հարթավայր, որ սկզբում գրավե՛ր անտիկ
պատմիչներին, իսկ հետագայում նաև ուսումնասիրողների ուշադրությունը: Պարզորոշ երևում է,
որ Պոլիբիոսը և Տակիտոսը խոսում են տարբեր դաշտավայրերի մասին: Տակիտոսի տեղադրու-
թյան նկարագրից երևում է, որ նա իսկապես խոսում է ապագայի Խարբերդի դաշտավայրի
մասին, որը նեղ շերտով ձգվում է Արածանի գետի ափին: Պոլիբիոսը, ընդհակառակը, խոսում
է Եփրատի և Տիգրիսի միջև գտնվող այլ դաշտավայրի մասին:

Քաջ հայտնի է, որ Տիգրիսը սկիզբ է առնում Խարբերդի դաշտավայրից հարավ՝ Մովսի-
սից: Սակայն «Աշխարհացոյցում» հիշատակվում է Տիգրիսի մեկ այլ ալունքը՝ ներկայիս Ջե-
բեն-սուն, որը գտնվել է Հաշտյանի գավառում³³: Այնուհանգերձ մինչև Արևելյան Տիգրիսի
ձեռքի հետ միանալը, Տիգրիսի վերահիշյալ հատվածը Մովսիսց սկիզբ առնող ալունքի անվանը
կոչվում է Արևմտյան Տիգրիս: Ուրեմն Գեղեցիկ դաշտը անհրաժեշտ է տեղադրել Հայկական
Արևելյան Տավրոսից հարավ, կամ որ միևնույն է՝ Անձիոցից հարավ և Անգեղ տնից արևմուտք՝
մինչև Մարդինի լեռները ընկած տարածքում: Եփրատ և Տիգրիս գետերի մերձեցում կամ մա-
տեցում, որի վերաբերյալ վկայում է Պոլիբիոսը, Հայկական լեռնաշխարհում տեղի է ունենում
մեր կողմից մատնանշված վերահիշյալ տարածքում, Հայկական Արևելյան Տավրոսից հարավ:
Այս շրջանից ներքև, կամ որ միևնույն է, Անգեղ տան հարավից սկսվում է մի հարթավայրա-
յին տարածք, որը շարունակվում է դեպի հարավ-արևելք, ընդգրկելով Նփուկերտը և Աղձն (Ար-
զան) գավառի արևմուտքը, իսկ Անգեղ տնից արևմուտք՝ Գիմաթենն գավառը:

Տիգրիսի ալունքները, ինչպես նշեցինք վերևում, գտնվում են Հայկական Արևելյան Տավ-
րոսի հարավային փեշերին, որտեղից էլ վերջինս սկսում է ձևավորվել որպես գետ, վերջնական
տեսք ընդունելով 38°-ի զուգամեծականից մի փոքր հյուսիս և 40°-ի միջօրեականից մի փոքր
արևելք: Ինչ վերաբերում է Եփրատին, ապա վերջինս կազմավորվում է վերահիշյալ տեղանից
շատ ու շատ ավելի հյուսիս-արևմուտք: Այսպիսով, պարզորոշ երևում է, որ Գեղեցիկ դաշտի և
նրա տարածքում տեղակայվող Արշամաշատ փաղարի հայտնի տեղադրությունը չի համապա-
տասխանում պատմական իսկություններին, որի վերաբերյալ վկայում է Պոլիբիոսը: Ինչ վերաբե-
րում է Տակիտոսին, ապա վերջինիս վկայությունը փաղարի տեղադրության մասին խիստ հեղ-
հեղուկ է և ոչինչ չի ասում, թե կոնկրետ որտեղ է գտնվել Արշամաշատը:

Ինչպես նշեցինք վերևում, Տիգրիսի վտակ Արևմտյան Տիգրիսը սկիզբ է առնում Հայկական
Արևելյան Տավրոսի լեռների բաղկացուցիչ մասը հանդիսացող Արզանի լեռներից Մովսիս լը-

²⁹ Տե՛ս Ն. Աղոնց, *Եշվ. աշխ.*, էջ 44—46:

³⁰ Polibii Historiae, VIII, 25:

³¹ Ն. Աղոնց, *Եշվ. աշխ.*, էջ 45—46: Տակիտոսը վկայում է. «Պետոսը վերստին ներշնչվե-
լով անհիմն ինքնավստահությամբ, երևը հազար ընտիր հետևակ է թողնում Տավրոսի մերձակա
լեռնաշխարհի վրա, որպեսզի արգելի թագավորին անցնել. դաշտի մի մասում տեղավորում է
իր հեծելազորի զորավորը կազմող Պանոնական թևային ջոկատները: Կնոզն ու որդուն նա
թաքցրել էր Արսամոսատա անունով ամրոցում...»: Tacitus, The annales, London, 1962,
XV, 11:

³² Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրիստոմատիա, հնագույն ժամանակներից մինչև IX
դարի կեսերը, խմբ. Գ. Խ. Սարգսյանի և Կ. Ա. Խուրշուդյանի, հ. 1, Երևան, 1981, էջ 60, 67:

³³ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, խմբ. Ս. Երեմյանի, էջ 27, նաև Ս. Տ. Երեմ-
յան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 106—107:

Տից, որոնք գտնվում են Խարբերդի դաշտավայրից հարավ: Այսպիսով հյուսիսից՝ Արղանի, արեւմտից՝ Արեւմտյան Տիգրիսի, արեւմուտից՝ Եփրատի և Մարդինի լեռների ու վերջապես հարավից մինչև Ամիդ քաղաքը ընկած տարածքների միջև: Դա համապատասխանում է Անգեղ տուն գավառի ծայր հարավին և Գիմարենն գլխոն, գտնվելով հարթավայրային զոգավորությունում: Հարավում այն ճանաչում է մինչև Ամիդ քաղաքը, որտեղից էլ Արեւմտյան Տիգրիսը 90° անկյան տակ շեշտակի քելվում է արևմուտքից դեպի արևելք: Մեր կողմից մատնանշված վերոհիշյալ հարթավայրային զոգավորությունում էլ անհրաժեշտ է փնտրել պատմիչ Պոլիբիոսի հիշատակած Դեղեցիկ դաշտավայրը կամ Ավելուան՝ առանց այն նույնացնելու Խարբերդի հարթավայրի հետ: Վերոհիշյալ սարածքում են գտնվում Արաոնեն և Վաղարշակի շերմուկները: Ավելի հաճավանական է, որ Պոլիբիոսը Դեղեցիկ անվան ներքո նկատի է ունեցել Վաղարշակի շերմուկները, որոնք, ինչ հայտնի է, ունեցել են բուժիչ հատկություն: Ինչ վերաբերում է և Ադոնցի հիմնավորմանը, որը Դեղեցիկի անվան ներքո հասկացել է Խարբերդի պողոպեբությունն ու բազմամարդ լինելը և դա բնորոշել է որևէ առական անակաճով, ապա այդ խիստ տարակուսելի է:

Այսպիսով, ինչպես տեսանք վերևում շարադրվածից, Մոփսը, համաձայն պատմիչ-աշխարհագրագետ Ստրաբոնի, անցել է զարգացման երկու ժամանակահատված: Առաջինը թագավորության ժամանակաշրջանն է, որի օրոք այն ընդգրկել է նախածավալ տարածք: Հարավում Մոփսի թագավորությունը հասել է մինչև Մասիսի լեռները, հարավ-արևելքում մինչև Ադոն գավառը՝ սահմանակցելով Կորզուիին մոտավորապես Քաղիթը գետի շրջանում: Երկրորդ հյուսիսում սահմանագիծը ընդգրկել է Ադիոն գավառը, որտեղ իրար են միանում Հայկական Նեբիս Տավրոսը և Անտիտավրոսը: Այնուհետև, թագավորության անկումից հետո (մ. թ. ա. 94 թ.) սկսվել է Մոփսի «տարածքային կորուստների ժամանակաշրջանը»: Նրանից առանձնացել է ինքնուրույն են դարձել առանձին գավառներ (Ադոնը, Ադիոնը, Գարանադին և այլն)՝ մտնելով այլ նահանգների կազմի մեջ: Դա կարող էր տեղի ունենալ երկու նահապարհով՝ աստիճանական կամ միանգամից: Մոփսի պատմության այս գործընթացի հանգույցը դեռևս մեզ տնում է անհայտ, որը կարող է պատմական ներ լրացուցիչ փաստերի: Մոփսի նախկին թագավորությունից որպես ժառանգություն պատմական ասպարեզի վրա են մնացել նույնանուն նահանգը կամ էակ Վորոնդ Հայր ու Շահունի կամ Շահունյաց Մոփս գավառը:

А. Ж. АРУТЮНЯН Софена и царство Софены согласно «Географии» Страбона. — Софена играла важную роль в истории Древней Армении. В своем развитии она прошла два этапа: независимое царство и провинция Великой Армении (с 94 г. до н. э.). Об истории Софены сравнительно обстоятельно говорится у Страбона в его «Географии». По Страбону, в период царства граница Софены проходила на северо-западе через область Аливии включительно, а на северо-востоке она граничила с Аквилитской (Екелецац). На юго-востоке граница шла по реке Калирт (Шититма) по соседству с Кордуком, а на юго-западе упиралась в гору Масия. В состав Софены входили западная часть Армянского Двуречья, Восточная Коммагена, Восточная Каппадокия и южная Малая Армения. После присоединения к Великой Армении западной границей Софены стала река Евфрат. Территория Софены сократилась и состояла только из провинции Софена (Четвертая Армения «Армянской Географии») и области Шахидская Софена.